

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

(Շար տես. յէջ 60)

ՏՊԱՐԱՆԻ ԹԵՐՈՒՍԱՂՂՄ ԹՈՐՈՐԱՇ Ի ՎԱՐԱԳ

ԵՒ Ի ԳԼԱԿ

ՊԱՏՐԻԱՐՔԱՅԱՆ աթոռ և վանա-
կան միաբանութիւն մը, ինչպէս ունէր իւր
դպրոցներն ու առաքելութիւնքն և ընդհա-
նուր ազգին վերայ ազդեցութիւն իւր եկեղե-
ցական դիրքով և ուխտական մեծարանաց այդ-
եւութեամբ, ունեցաւ և ունի իւր ապարա-
նը, թէպէտև ապագրութեան գիւտին մեր
ազգին մէջ մանեւէն շատ վերջը ։

Համառօտ գրուածքիս ընթացքին մէջ ալ
տեսանք որ ընդհանրապէս մեր եկեղեցա-
կան պետք, երբ կ'ուզէին մերոնց մէջ մշա-
ցընել ապագրութեան բարեբար ազդեցու-
թիւնը, աւելի էւրօպայից մէջ, քան թէ ուրիշ
տեղ կը ջանային զրկել իրենց երեսփոխա-
ները ։ Հռոմ, վիեննտիկ, Ստամբուլ, Մարսիլիա և Լիւթովնոյ հաւատարիմ հա-
ւատիրէն մեր խօսքին ։ Եւրոպա դիմելնուն
ալ պատճառը յայտնի էր. այն ատեն ա-
բևմուտք օրչափ որ այժմեան յառաջագիմու-
թիւնը չունէր, սակայն արևելից հետ չէր
կարելի բազմապատել ։ Այս եղաւ պատճառ Ջու-
զայի և Լէվիմանի մէջ՝ ժամանակ անցնելէն
յետոյ՝ մասնաւոր ապարանի բացման, թէպէտ
իրենց եղան ապագրութեան արուեստին ի
Հայս զարգանալուն ջանադիր, և նոյն վախ-
ճանաւ այլ և այլ անձինք զրկեցին յէւրոպա-
ինչպէս ծանօթ է ընթերցողաց ։

Մի և նոյն պատճառաւ ուշացած կը գրու-
նենք Երուսաղեմի ապարանը ։ Բայց այսօր
մեր գիմնաց ու ձեռքին մէջ ունինք իր հրա-
տարակութեանց ցուցակը. սակէ կ'իմանանք
թէ՝ առաջին գիրքը ապագրուեր է 1835
թուականին, որով ապարանին հիմնարկութեան
թուականն այն կրնանք դնել ։ Վերնադիրն է,

« Տետրակ աղօթամատոյց, վասն ջերմեանդն
աղօթասիրաց, որք կամ անձամբ կամ մաօք
ներկայանան ի սուրբ Տնորինական սեղիսն
Քրիստոսի Աստուծոյ մերոյ » ։ Հանձնա վար-
դապետին Տնորինական ս. տեղեաց նկա-
րագրութեան գիրքը, զանազան անգամ աը-
պուած է՝ բայց միշտ ի Կ. Պոլիս ։ Կը յի-
շենք այլ և այլ գրքոյններ Երուսաղեմի վե-
րայ, բայց միշտ ուրիշ տեղ ապուած և մաս-
նաւորաբար ի Պոլիս ։ Ասանկ կը հասնիմք
մինչև դարուս կէսը, յորում ինչպէս բոլոր
արևելք, Երուսաղեմ ալ նոր կերպարանք
մ'առնելով, իւր բազմաթիւ ուխտատեղիներով
և ուխտաւորք՝ եւրոպական ազգաց և ժողովրդոց
մասագրութիւն իր վերայ կը դարձնէ, ոչ միայն
կաթոլիկեայց, այլ նաև ռուս և բողոքական
ժողովրդոց և հրէից, ռուսի օրչափ ալ ուխ-
տատեղեաց զիստորք նոյն առաջի ազգաց
ձեռք կը մնան, սակայն եկաւորք յէւրոպայի
և ուրիշ տեղերէ կը սկսին յաճախել, որով
և կը կտրուցուին հասարակաց և առանձին
շինութիւնք, վանորայք, դպրոցք և հիւան-
դանոցք ։ Արևելեան պատերազմն անդամ
1855 թին այս խնդրէն կը ծագի ։

Հայք բնականաբար անտարբեր և պարզ
դիպաց տեսողք չէին կրնար մնալ, պէտք էր
որ ժամանակին հետ իրենք ալ շարժէին,
մանաւանդ որ ի հնուց ի վեր պատերաբքա-
կան աթոռ ալ ունէին, և թալակրաց ժա-
մանակներէն յետոյ, Երուսաղեմը քրիստո-
նէութեան պահելու ճգնաց մէջ՝ չէին ուզած
պակաս գտնուիլ ուրիշ ազգերէն ։

Ներկայ պատերաբք Թարութիւն վեհապե-
տեան՝ աթոռոյն վրայ յրազմած, ճանապար-
հորդեր էր յէւրոպա, և բայ ի լուսազրական
արուեստէն՝ տեղեկացեր էր նաև թէ Բնչպէս
և որպիսի՝ ճամբով կարելի է յառաջագիմել,
և ուզեց Երուսաղեմի վանքն ալ ժամանակին
պահանջած կարգին և պայմանին մէջ դնել ։

Բարեբաւտ գտնուեցաւ որ նախորդ վար-
դապետաց հետևողք ալ պակաս չէղան, այսօր
Երուսաղեմի միաբանութիւնը ծագկած գիրքի
մէջ կրնայ համարուիլ՝ իր ապագրութեամբ և
լուսադիր գործարանաւ ։ — Նոր ապագրու-
թեանց մէջ անուանի է Ս. Գրոց Բառա-
րաբք, Աստուածատուր Եպիսկոպոս Տէր Յով-

հաննիսեանի շարագրած երկհատոր Երոզ-
սաղենի պատմութիւնը : փափարելի է որ
Մուրատեան սրբազանի և Սաւալանի օ-
րերուն գործունէութիւնը նորոգուի , զոր կը
սիրենք յուսալ թէ՛ ներկայ պատրիարքին
շահքէն և թէ՛ Սահակ Խաչատուրեան սրբազանի ,
և միանգամայն ամբողջ Միաբանութեան
գործակցութենէն :

Տպարան մ'ալ հաստատուեցաւ զարուս կի-
սէն ետքը ի Չարխափան վանս Աստուածածնի
յԱրմաշ , Նիկոմիդիոյ վիճակին մէջ . դարուս
սկիզբէն ի վեր կար և շինուած էր Արմաշի
վանքը , բայց պարզապէս ուխտասանդի հա-
մարուած էր բարեպաշտից . 1850 ետքը մը-
տածուեցաւ նոր կերպարանք մը տալ ազգային
այդ հաստատութեան , տպարան մ'ալ հաս-
տատելով հոն՝ ու Յոյն ամսագիրը հրատա-
րակելով Խորէն վարդապետ Ալըքեանի ջան-
քով , որ վանահայր էր և տեսուչ նոյն ամ-
սագիրքին :

Բաւական գովելի կերպով ու հետաքննա-
կան յողումներով , մերթ ընկերելով ուրիշ
զրուածներ ալ կը հրատարակուէին ամսա-
թերթէն քաղուած : Բայց քանի մի տարիէն
Եղիսը դադրեցաւ՝ անշուշտ վերառեսլին եւ
սխիզուողական աստիճան բարձրանալուն և
Պրոսպ պատրիարքական աթոռը բազմելուն
համար : Այն գտաւորին պաշտաման մէջ չի
կրցաւ զլրութիւն ազգին զո՛հ ընել . կար-
ծուելով որ աւելի գործունեայ անձ մը կա-
րող էր ազգին օգտակար ըլլալ , ուստի բրու-
նապատեցաւ աթոռէն հրաժարիլ , իր սկզբանց
և գործելու կերպին բոլորանակութիւն և հա-
մառօտութիւն կրնայ սեպուիլ , գէթ ըստ մեր
մասնաձին կործնաց , Ելեկցաղ եկեղեցականաց
գիրքը , զոր պատրիարքութեան ժամանակ
հրատարակեց ի Պրոսպ :

Արմաշու վանքը այսօր (1893) ընծայա-
րան մ'է , և ազգին պատրիարքական իշխա-
նութեան ենթակայ : Ո՛ւնի փոխ-առաջնորդ
մը և ուսմանց տեսուչ , ընդհանրապէս զա-
ւանդեալն առնուած վարդապետ և քահանա-
յացու պատանիք , որոնք տարիներով ուսման
յարապակելով , աստեմիս սրբազան կարգ կ'ընդ-
ունին , և ազգին մէջ կը շատնան՝ թէ՛ ի-
րենց կոչման արժանաւոր և թէ՛ ուսումնա-

կան եկեղեցականք , իրենց ուսման և հըմ-
տութեան երախայրիկ մը կրնար սեպուիլ
Մասիս կրօնական թերթը՝ որ միայն քանի
մը ամիս տեսողականութիւն ունեցաւ , փոխ-
առաջնորդին պատրիարքական աթոռը բար-
ձրանալուն համար :

Վարազայ ու Գրակայ վանից հայր ու ետքը
եպիսկոպոս ընտրուեցաւ Միկտիշ վարդապետ
Խորիմեան , որ այսօր Էջմիածնի հայրապետա-
կան աթոռը կը գրաւէ զսխիզեամբ :

Ինքը ծննդեամբ վանեցի է , Հոյասաանի
խեղճութեան և ակնաստես և անդեակ ,
ուզած է գիտութիւնն տարածել հայրենի ուշ-
խարհին մէջ , ու երկրագործութիւնը ծաղկե-
ցրնելով՝ պոնդիտութեանց և անոնց տնօրէ
հետեանքներու առաջն առնուլ : Ազգայնոց որ
ի Պրոսպ , փափագն ու միտքը այն էր , որք
հետք տեսնուէր ու ճանչցեր էին իր հայրե-
նասիրութիւնը , ու իր և ընդհանուր հայրե-
նեաց վիճակը բարւոքելու ետանդը :

Խորիմեանի կենսագիրը կ'աւանդին թէ շատ
գտնարութեանց հանդիպած ըլլայ մտքի զրա-
ծը առաջ տեսնելու համար , բայց գտնարու-
թեանց առէն կանգ առնող և զիւրաւ յու-
գահատող մարդ չէր բարեբախտաբար :

Իրեն հետ միաբանեց շատ աշակերտա-
նք , իր մտքին և խորհրդոց համաձիւծ և
հայրենասնուէր անձինք և երիտասարդք , ի
աշխուժի և գործունեայ եռանդեամբ , ու ա-
նոնց հետ առանձնացաւ վարազայ վանքը ,
ու Եւրոպայէն այլևայլ երկրագործական գոր-
ծիներ բերած առան , չի մոռցաւ բարերա-
րաց արդեամբք նսեւ երկու մամուլ և տպա-
գրական առանք և կազմածք , Նիկթական հո-
ղոյն հետ նսեւ մտքերն ուզելով մշակել :

Առաջին մամուլներն եղան ի Թուրքահա-
յաստան , մեր հայրենեաց հողոյն վրայ ի-
րենց բարերար ճոխնը արձակողք :

Տարակոյս չի կայ որ հայրենեաց անքն
սխիւ լսեցնէր Խորիմեան , և ազգայինք եւ-
րախտապարտ սխիւ ըլլային իրեն և աշա-
կերտացաւ : 1857ին սկսաւ հրատարակել Ար-
ծուի վաւսպութական ամսագիրը , ու երբ
մամուլն ու տպուէր հասան վարազ , ամէն
կրած նեղութիւններ կործես թէ մոռցաւ :

« Շարորդները մեծ մասամբ իր աշակերտա-

ներն էին : Պարսպմունքներից ազատ ժա-
մանակ՝ աշակերտները միանգամայն աշխա-
տում էին տպարանում, — ոմանք շարում
էին, ոմանք մամուլն էին կտաւարում,
ոմանք մուր էին տալիս, ոմանք թուղթ...
Աւելորդ չենք համարում ամազրի մասին
մի քանի մանրամասնութիւններ յառաջ բերել :
Արժուի վասպտրական լոյս էր տեսնում
ամիսը մի անգամ, իւրաքանչիւր համարը
բաղկացած էր լինում մօտ 30 երեսից, մեծ
գիրքով...

Ուներ երեք գլխաւոր բաժին.

1. Հանդէս աւտուշաժապաշտոնքնան, որի
մէջ արժարժւում էին քրիստոնէական բարձր
զաղապարներ, զրկում էին նշանաւոր եկե-
ղեցականների կենսագրութիւններ և զոր-
ծերը :

2. Հանդիսարան հայրենասէր աշաքի-
նեաց, որի մէջ խօսւում էր նշանաւոր թա-
ղաւորների և իշխանների մասին և առ հաս-
րակ մեծ անձնաւորութիւնների, աշխատելով
պարզել, թէ քնշ մարդիկ էին զորք և ինչ
արեցին, նկարագրելով Հայոց պատմութեան
բոլոր շրջաններին :

3. Տեսարանք հայրենեաց, որտեղ զըր-
վում էին նշանաւոր հնութիւնների, վանքե-
րի, քաղաքների և գիւղերի նկարագրութիւն-
ները, ժողովրդի կենցաղավարութեան հետ
միասին : Դա երկրի ուսումնասիրութիւնն էր :

4. Թանգարան հայկական դպրոնքեանց,
այդ մասին մէջ տպագրւում էին մանրամասն
տեղեկութիւններ այն բոլոր հին և նոր ձե-
ռագիրների և գրքերի մասին՝ որ թրիմեան՝
ձեռք էր բերում Հայաստանի զանազան կող-
մերից :

Վարագի անունը հռչակւում էր :

Պատմական վանքը նոր ոգի, նոր կեանք
էր ստացել : Նախկին ամայութեան փոխա-
րէն արիւմ էր կեանք... վանքի բոլոր կող-
մերում... տնկւում էին ծաղիկ, այգիներ,
պարուկներ...» (Կենսւ. Խ. Մառտիկեանց)

1861ին դարձաւ ի Պարսկահայոց ի վա-
րագ :

Բայց հետեւալ տարին թրիմեանի յանձ-
նուեցաւ նաև Տարոնոյ ամբողջ գաւառը Գլա-
կայ կամ սուրբ Կարապետի վանքովը, և ա-
ռաջնորդ և վանահայր անուանելով՝ եպիս-
կոպոսական ձեռնադրութիւնն ալ ընդունեցաւ
նաև յԵլմիածին :

Այսպէս վարագայ ու Գլակայ վանորայք
իրեն խնամոց յանձնուեցան : Իրեն հետ իւր
աշակերտներն ևս քահանայական սուրբ կարգն
ընդունելով, կրօնից հետ գիտութիւն և ու-
սումն սկսան ծաւալել այն պատմական վան-
քերէն :

Բայց թրիմեանի ըրած նորութիւնքն, մա-
նաւանդ իր զանուած դիրքին մէջ, չէին կրնար
ամենուն հաճոյանալ : Բազմաթիւ էին բա-
րեկամքը ազգին մէջ, բայց ունէր նաև հա-
կաւորողքը :

Այս գիրքին մէջ էր՝ երբ Պոլսոյ պա-
արիարքական աթոռը բազմեաւ կոյուեցաւ :

Չորս հինգ տարի պատրիարքական աթոռ-
ոյն վրայ բազմելով, բունպատուեցաւ վեր-
ջապէս հրաժարիլ, և յաջորդ ընտրուեցաւ ի-
րեն Ներսէս արքեպիսկոպոս, որ պատգա-
մաւոր դրկեց զՀայրիկ ի վեհամողովն Բերլի-
նու : Այս առթիւ Եւրոպայոյ բոլոր մայրա-
քաղաքները քալեց, և ազգին վիճակը ներ-
կայացուց աէրուէեանց արտաքին պաշտօնէից,
որպէս զի ժողովոյն մէջ կարեման պէտք ե-
ղածը կարգադրել :

Վեհամողովոյն աւարտելէն ետքը՝ դարձաւ
ի Պոլսի և ի Հայաստան, ուր քիչ ատեն
մնալով, միւսանցամ. եկաւ ի Պոլսի և ան-
տի յԵրուսաղէմ :

Հոն յԵլմիածին լուր և պատուիրակ ըն-
դունեցաւ, թէ ինչպէս ազգին քուէիւք բար-
ձրացեր էր ի կաթողիկոսական աթոռ :

Այս սողերը գրած ատեննիս, նոյն բարձր
պաշտաման մէջ է :

